

«ԱրմենՏել» ՓԲԸ

Ամփոփ համախմբված ֆինանսական հաշվետվություններ

2013 թվականի համար

անկախ աուդիտորական եզրակացության հետ միասին

Բովանդակություն

Անկախ աուդիտորական եզրակացություն ամփոփ համախմբված ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ

Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին ամփոփ համախմբված հաշվետվություն	1
Ֆինանսական վիճակի մասին ամփոփ համախմբված հաշվետվություն.....	2
Սեփական կապիտալում փոփոխությունների մասին ամփոփ համախմբված հաշվետվություն	3
Դրամական միջոցների հոսքերի մասին ամփոփ համախմբված հաշվետվություն	4
Ծանոթագրություն.....	5



Կառուցելով
բարեկեցիկ աշխարհ

Ernst & Young CJSC
1 Northern Ave., office 27
Yerevan, 0001, Armenia
Tel: +374 (10) 500 790
+374 (10) 500 705
Fax: +374 (10) 500 706
www.ey.com/am

«Էրնսթ ընդ Յանգ» ՓԲԸ
ՀՀ, ք. Երևան 0001
Հյուսիսային պող. 1, գրասենյակ 27
Հեռ. +374 (10) 500 790
+374 (10) 500 705
Ֆաքս. +374 (10) 500 706

Անկախ աուդիտորական եզրակացություն ամփոփ համախմբված ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ

«ԱրմենՏել» ՓԲԸ-ի բաժնետերերին

Կից ներկայացված ամփոփ համախմբված ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են 2013թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին ամփոփ համախմբված հաշվետվությունը, 2013թ.-ի համապարփակ ֆինանսական արդյունքների մասին ամփոփ համախմբված հաշվետվությունը, սեփական կապիտալում փոփոխությունների մասին ամփոփ համախմբված հաշվետվությունը և դրամական միջոցների հոսքերի մասին ամփոփ համախմբված հաշվետվությունը, ինչպես նաև համապատասխան Ծանոթագրություն, քաղված են 2013թ.-ի «ԱրմենՏել» փակ բաժնետիրական ընկերության և նրա դուստր ընկերության (այսուհետ՝ «Խումբ») աուդիտի ենթարկված համախմբված ֆինանսական հաշվետվություններից: 2014թ. հունիսի 30-ին թվագրված մեր աուդիտորական եզրակացությունում, մենք արտահայտել ենք չձևափոխված աուդիտորական կարծիք նշված համախմբված ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ:

Ամփոփ համախմբված ֆինանսական հաշվետվությունները չեն պարունակում ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների կողմից պահանջվող բոլոր բացահայտումները: Այդ իսկ պատճառով, ամփոփ համախմբված ֆինանսական հաշվետվությունները չեն փոխարինում Խմբի աուդիտի ենթարկված համախմբված ֆինանսական հաշվետվությունները:

Ամփոփ համախմբված ֆինանսական հաշվետվությունների համար աուդիտի ենթարկված անձի պատասխանատվությունը

Աուդիտի ենթարկված անձի ղեկավարությունը պատասխանատու է ամփոփ համախմբված ֆինանսական հաշվետվությունները Ծանոթագրությունում նկարագրված սկզբունքներին համապատասխան պատրաստելու համար:

Աուդիտորի պատասխանատվությունը

Մեր պատասխանատվությունն է «Ամփոփ ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ աուդիտորական եզրակացության նկատմամբ կիրառվող առաջադրանքներ» Աուդիտի միջազգային ստանդարտին (ԱՄՍ 810) համապատասխան իրականացրած ընթացակարգերի հիման վրա ամփոփ համախմբված ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ կարծիքի արտահայտումը:

Կարծիք

Մեր կարծիքով, 2013թ.-ի Խմբի համախմբված ֆինանսական հաշվետվություններից քաղված ամփոփ համախմբված ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով համապատասխանում են Ծանոթագրությունում նկարագրված սկզբունքներին համապատասխան պատրաստված վերոնշյալ համախմբված ֆինանսական հաշվետվություններին:

«Էրնսթ ընդ Յանգ» ՓԲԸ

Աուդիտի բաժնի գործընկեր՝

Գլխավոր տնօրեն՝ Հ. Մարգարյան՝ ի դեմս լիազորված անձ Է. Հայրապետյանի (գործող 2013թ.-ի հուլիս 31-ին տրված լիազորագրի հիման վրա)

30 հունիսի, 2014թ.



Օլեսյա Մելնիկ

Էրիկ Հայրապետյան

Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին ամփոփ համախմբված հաշվետվություն
2013 թվականի դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա համար

(հազար ՀՀ դրամ)

	2013 թ.	2012 թ.
Ծառայությունների մատուցումից հասույթ	58,309,072	59,596,131
Սարքավորումների իրացումից հասույթ	954,325	3,658,530
Ընդամենը գործառնական հասույթ	59,263,397	63,254,661
Ծառայությունների ինքնարժեք	(38,419,472)	(39,129,064)
Իրացված սարքավորումների ինքնարժեք	(1,601,688)	(4,269,652)
Վարչական ծախսեր	(5,762,510)	(5,700,036)
Իրացման ծախսեր	(3,995,740)	(4,887,489)
Այլ ծախսեր	(3,478,343)	(3,990,135)
Ընդամենը գործառնական ծախսեր	(53,257,753)	(57,976,376)
Գործառնական գործունեությունից շահույթ	6,005,644	5,278,285
Ֆինանսական եկամուտ	2,459,416	1,247,552
Ֆինանսական ծախսեր	(52,469)	(47,265)
Արտարժույթի փոխարժեքի փոփոխությունների զուտ տարբերություն	(29,230)	637,127
Այլ եկամուտներ	251,350	559,071
Շահույթ մինչև շահութահարկ	8,634,711	7,674,770
Շահութահարկի գծով ծախս	(3,230,272)	(1,990,711)
Հաշվետու տարվա շահույթ	5,404,439	5,684,059
Այլ համապարփակ ֆինանսական արդյունքներ	-	-
Ընդամենը համապարփակ ֆինանսական արդյունքներ	5,404,439	5,684,059

Գլխավոր տնօրեն՝

Ֆինանսական տնօրեն՝

Գլխավոր հաշվապահ՝

30 հունիսի, 2014թ.

Ա. Պյատախին

Կարապետյան

Ի. Բալայան



Ֆինանսական վիճակի մասին ամփոփ համախմբված հաշվետվություն**2013 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ***(հազար ՀՀ դրամ)*

	2013 թ.	2012 թ.
Ակտիվներ		
Ոչ ընթացիկ ակտիվներ		
Հիմնական միջոցներ	57,201,781	66,318,177
Ոչ նյութական ակտիվներ	4,368,330	5,278,448
Այլ ոչ ընթացիկ ֆինանսական ակտիվներ	–	29,433,901
Վարձակալված գույքի վրա կատարված կապիտալ ծախսեր	2,060,967	2,257,702
Հետաձգված հարկային ակտիվներ	1,609,073	1,515,705
Ոչ ընթացիկ ակտիվների ձեռք բերման գծով կանխավճարներ	60,978	430,537
Այլ ոչ ընթացիկ ակտիվներ	70,078	70,078
	65,371,207	105,304,548
Ընթացիկ ակտիվներ		
Պաշարներ	1,532,791	2,518,921
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	6,240,560	10,553,473
Կարճաժամկետ փոխառություններ	43,959,177	–
Կանխավճարներ շահութահարկի գծով	1,522,817	–
Կանխավճարներ այլ հարկերի գծով	776,824	963,861
Հետաձգված ծախսեր	79,974	565,197
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	12,065,658	5,574,009
	66,177,801	20,175,461
Ընդամենը ակտիվներ	131,549,008	125,480,009
Սեփական կապիտալ և պարտավորություններ		
Սեփական կապիտալ		
Կանոնադրական կապիտալ (188,377,090 բաժնետոմսեր յուրաքանչյուրը 100 ՀՀ դրամ նոմինալ արժեքով)	18,837,709	18,837,709
Պահուստներ	2,825,656	2,825,656
Զբաղիված շահույթ	98,324,855	92,920,416
Ընդամենը սեփական կապիտալ	119,988,220	114,583,781
Ոչ ընթացիկ պարտավորություններ		
Պահուստներ	550,481	496,128
Հետաձգված եկամուտ	508,058	619,087
	1,058,539	1,115,215
Ընթացիկ պարտավորություններ		
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	7,210,874	6,604,478
Հետաձգված եկամուտ	324,819	349,324
Աշխատավարձի գծով պարտավորություններ	176,182	198,362
Ստացված կանխավճարներ	1,192,968	1,518,950
Պահուստներ	1,313,614	569,723
Պարտավորություններ շահութահարկի գծով	–	403,808
Այլ հարկային պարտավորություններ	283,792	136,368
	10,502,249	9,781,013
Ընդամենը պարտավորություններ	11,560,788	10,896,228
Ընդամենը սեփական կապիտալ և պարտավորություններ	131,549,008	125,480,009

Մեփական կապիտալում փոփոխությունների մասին ամփոփ համախմբված հաշվետվություն

2013 թվականի դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա համար

(հազար ՀՀ դրամ)

	Կանոնադրական կապիտալ	Պահուստներ	Զբաղիված շահույթ	Ընդամենը սեփական կապիտալ
2011 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	18,837,709	2,825,656	87,236,357	108,899,722
Հաշվետու տարվա շահույթ	–	–	5,684,059	5,684,059
2012 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	18,837,709	2,825,656	92,920,416	114,583,781
Հաշվետու տարվա շահույթ	–	–	5,404,439	5,404,439
2013 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	18,837,709	2,825,656	98,324,855	119,988,220

Դրամական միջոցների հոսքերի մասին ամփոփ համախմբված հաշվետվություն**2013 թվականի դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա համար**

(հազար ՀՀ դրամ)

	2013 թ.	2012 թ.
Գործառնական գործունեություն		
Մուտքեր ապրանքների վաճառքից, ծառայություններ մատուցումից, աշխատանքների կատարումից	66,200,635	72,249,962
Մտացված տոկոսներ	239,580	277,223
Մուտքեր այլ գործառնական գործունեությունից	211,856	131,081
Գործուղումների գծով վճարումներ	(78,317)	(95,888)
Այլ գործառնական գործունեությունից դրամական միջոցների ելքեր	(366,418)	(370,071)
Վարձակալության վճարներ	(1,351,974)	(1,326,289)
Վճարումներ բյուջե շահութահարկի գծով	(5,250,267)	(2,524,000)
Ելքեր նյութերի, ապրանքների ձեռքբերման գծով	(1,502,522)	(5,704,194)
Վճարումներ աշխատակիցներին և նրանց անունից	(7,789,601)	(7,472,544)
Վճարումներ բյուջե, բացի շահութահարկը	(7,713,281)	(7,717,156)
Աշխատանքների կատարման, ծառայությունների մատուցման գծով վճարումներ	(19,226,191)	(24,100,840)
Դրամական միջոցների հոսքեր գործառնական գործունեությունից	23,373,500	23,347,284
Ներդրումային գործունեություն		
Մուտքեր ոչ ընթացիկ նյութական և ոչ նյութական ակտիվների վաճառքից	42,293	191,487
Մուտքեր մինչև մարման ժամկետը պահվող կարճաժամկետ բանկային ավանդների և երկարաժամկետ փոխառությունների վերադարձումից	–	4,547,500
Ելքեր ոչ ընթացիկ նյութական և ոչ նյութական ակտիվների ձեռքբերումից	(4,628,888)	(4,395,171)
Ելքեր ֆինանսական ակտիվների ձեռքբերումից, փոխառությունների տրամադրումից	(12,342,535)	(20,301,330)
Զուտ դրամական միջոցների հոսքեր ներդրումային գործունեությունում	(16,929,130)	(19,957,514)
Ֆինանսավորման գործունեություն		
Ելքեր ստացած վարկերի և փոխառությունների մարումից	–	(2,220)
Զուտ դրամական միջոցների հոսքեր՝ ֆինանսավորման գործունեությունից	–	(2,220)
Ընդամենը դրամական միջոցների զուտ հոսքեր	6,444,370	3,387,550
Արտարժույթի փոխարժեքի փոփոխությունների զուտ տարբերություններ	47,279	60,799
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ հաշվետու ժամանակաշրջանի սկզբում	5,574,009	2,125,660
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ հաշվետու ժամանակաշրջանի վերջում	12,065,658	5,574,009

Ծանոթագրություն

Համաձայն «Հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենքի պահանջների՝ «ԱրմենՏել» ՓԲԸ-ն պետք է հրապարակի իր համախմբված ֆինանսական հաշվետվությունները:

Սույն ամփոփ համախմբված ֆինանսական հաշվետվությունները ներառում են 2013թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին ամփոփ համախմբված հաշվետվությունը, 2013թ.-ի համապարփակ ֆինանսական արդյունքների մասին ամփոփ համախմբված հաշվետվությունը, սեփական կապիտալում փոփոխությունների մասին ամփոփ համախմբված հաշվետվությունը և դրամական միջոցների հոսքերի մասին ամփոփ համախմբված հաշվետվությունը այն տեսքով, որով դրանք ներառվել էին Խմբի առդիտի ենթարկված համախմբված ֆինանսական հաշվետվությունների ամբողջական փաթեթում՝ 2014թ. հունիսի 30-ին ստորագրված և պատրաստված ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների սկզբունքներին համապատասխան:

Կից ներկայացված ամփոփ համախմբված ֆինանսական հաշվետվությունները չեն ներառում համախմբված ֆինանսական հաշվետվությունների ամբողջական փաթեթում ներկայացված բոլոր բացահայտումները, մասնավորապես, հաշվապահական հաշվառման քաղաքականության հիմնական դրույթները և այլ ծանոթագրությունները, որոնց բացահայտումը պահանջվում է ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներին համապատասխան: Համախմբված ֆինանսական հաշվետվությունների ամբողջական փաթեթը կարելի է ստանալ Խմբի ղեկավարությունից՝ ըստ պահանջի: